

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ  
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2012թ. ԶԵՌՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի և 1.16-րդ կետի <<ա>> ենթակետի պահանջներով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների 2012 թվականի ջեռուցումն արդյունավետ կազմակերպելու, ջեռուցման նպատակով տրվող վառելիքի ստացման և ըստ դասարանների ու լրացուցիչ տաքացվող սենյակների բաշխման հաշվառումն ու հրապարակայնությունն ապահովելու նպատակով

**Կարգադրում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության 2012թ. պետական բյուջեով հանրակրթական դպրոցներում ուսուցման գծով պետական պատվերի ծրագրով ջեռուցման նպատակով տրվող վառելիքի չափը և ջեռուցման սեզոնում տաքացվող օրերի թիվը սահմանել

1) հարթավայրային բնակավայրերի դպրոցների համար 80 ջեռուցման օր (2.6 լիտր՝ ըստ դասարանների և լրացուցիչ տաքացվող 2 սենյակների հաշվով՝ հեղուկ վառելանյութով ջեռուցվող դպրոցների համար)

2) լեռնային բնակավայրերի դպրոցների համար 106 ջեռուցման օր (3.1 լիտր՝ ըստ դասարանների և լրացուցիչ տաքացվող 2 սենյակների հաշվով՝ հեղուկ վառելանյութով ջեռուցվող դպրոցների համար)

3) բարձրլեռնային բնակավայրերի դպրոցների համար 116 ջեռուցման օր (3.7 լիտր՝ ըստ դասարանների և լրացուցիչ տաքացվող 2 սենյակների հաշվով՝ հեղուկ վառելանյութով ջեռուցվող դպրոցների համար)

2. 2012 թվականի 1-ին կիսամյակի ջեռուցման սեզոնի սկիզբ համարել ս/թ 01ի 23-ը, սահմանելով՝

1) հարթավայրային բնակավայրերի դպրոցների համար 47 ջեռուցման օր

2) լեռնային բնակավայրերի դպրոցների համար 58 ջեռուցման օր

3) բարձրլեռնային բնակավայրերի դպրոցների համար 66 ջեռուցման օր

3. 2012-2013 ուստարվա 1-ին կիսամյակում ջեռուցման սեզոնի սկիզբը համարել՝

1) հարթավայրային բնակավայրերի դպրոցների համար

ա ) 5-օրյա աշխատանքային շաբաթով աշխատող դպրոցների համար ս/թ նոյեմբերի 8-ից մինչև դեկտեմբերի 24-ը ներառյալ, 33 ջեռուցման օր

բ ) 6-օրյա աշխատանքային շաբաթով աշխատող դպրոցների համար ս/թ նոյեմբերի 16-ից մինչև դեկտեմբերի 24-ը ներառյալ, 33 ջեռուցման օր

2) լեռնային բնակավայրերի դպրոցների համար

ա ) 5-օրյա աշխատանքային շաբաթով աշխատող դպրոցների համար ս/թ հոկտեմբերի 11-ից մինչև դեկտեմբերի 24-ը ներառյալ, 48 ջեռուցման օր(դպրոցական արձակուրդների օրերը չհաշված)

բ ) 6-օրյա աշխատանքային շաբաթով աշխատող դպրոցների համար ս/թ հոկտեմբերի 30-ից մինչև դեկտեմբերի 24-ը ներառյալ, 48 ջեռուցման օր

3) բարձրլեռնային բնակավայրերի դպրոցների համար

ա ) 5-օրյա աշխատանքային շաբաթով աշխատող դպրոցների համար ս/թ հոկտեմբերի 9-ից մինչև դեկտեմբերի 24-ը ներառյալ, 50 ջեռուցման օր (դպրոցական արձակուրդների օրերը չհաշված)

բ ) 6-օրյա աշխատանքային շաբաթով աշխատող դպրոցների համար ս/թ հոկտեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 24-ը ներառյալ, 50 ջեռուցման օր (դպրոցական արձակուրդների օրերը չհաշված)

4. Մարզային ենթակայության կրթական հաստատությունների տնօրեններին՝

1) հեղուկ վառելանյութի ձեռքբերումը կատարել <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան

2) խստորեն հետևել հրդեհային անվտանգության կանոնների պահպանմանը և ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2005թ-ի հոկտեմբերի 11-ի թիվ 77-Ա կարգադրության պահանջների կատարմանը :

5. Սահմանել, որ ջեռուցման օրերի թիվը կարող է ավելացվել հաստատության լրացուցիչ միջոցների առկայության դեպքում:

6. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Ղուկասյանին:

7. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ